ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

.«ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14 հունիսի 2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Իսկանդարյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Խաչատրյան, Ռ. Դիլոյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ք. Ադամյան, Ա. Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Թադևոսյան

1. .«ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

1.1 Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար 2019թ. վառելիքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի 11.06.2019թ. Ժամը՝ 12:00-ի նիստում հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգի N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով էլեկտրոնային փոստի միջոցով որոշեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած Մասնակից «ՖԼԵԾ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

2.1 «ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ ճանաչված մասնակից «ՖԼԵԾ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվությունը, ինչպես նաև «ՖԼԵԾ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված փաստաթղթերը «ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

3.1 «ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՖԼԵԾ» ՍՊԸ-ին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

3.3 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի հետ կկնքվի վառելիքի ձեռքբերման գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Է. Իսկանդարյան

Քարտուղար՝ ---------- Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Ա. Խաչատրյան

2. ---------- Ռ. Դիլոյան

Բացող անդամներ՝

1. ---------- Ա. Թովմասյան

2. ---------- Ք. Ադամյան